

ՄՕՏ 400 ՀԱՅԵՐ ՍՊԱՆՆՈՒԱԾ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՄԷՋ

Այս լուրը հաղորդուած է Արէնֆէն՝ փրանսական մամլոյ գործակալութեան կողմէ, գորստորեւ կը ներկայացնենք մեր ընթերցողներուն:

Հայկական ժողովրդական Շարժումի պատասխանատուներէն Արմէն Մարութեան(°) մամլոյ Կասուլիսի մը ընթացքին յայտարարեց, թէ 350էն մինչեւ 400 հայեր սպաննուած են Ատրպէյնանի մէջ, ուր տեղւոյն հայերը կազմած են ինքնապաշտպանութեան կոմիտէներ, դէմ դնելու համար իրենց դէմ գործուած ջարդին:

Հայկական ժողովրդական Շարժումը կը նկատուի Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի - ԱՍԱԼԱ-ի ֆազաբական ճիւղը:

Արմէն Մարութեան յայտնած է թէ իր այս տեղեկութիւնը ստացած է Երեւանէն՝ հայ պատասխանատուներէ: Դատապարտելով ատրպէյնանցիներու «փանթուրֆական ձգտումները», ան ըսած է թէ իայ ժողովուրդը նոր ցեղասպանութեան մը դէմ յանդիման կը գտնուի ներկայիս:

Ան հաստատած է թէ «ատրպէյնանցի իշխանութիւնները կազմակերպած են ջարդերը եւ պատասխանատու են ցեղապաշտական արարներու գործադրութեան»: Ան աւելցուցած է թէ

12 օր խռաջ ատրպէյնանցի երիտասարդներ իւրանդանոցէ մը ներս մուտք գործած են Սիւմկայիթի մէջ եւ պատահանէն դուրս նետած յզի հայ կին մը: Այդ իիւանդանոցին շուրջը ոչ մէկ պահակ դրուած էր:

Սումկայիթի հայերը թաղերու մէջ ինքնապաշտպանութեան կոմիտէներ կազմած են իրարու օգնելու լիամար: Այդ կոմիտէներէն մին կրցած է ստոյգ մահէ փրկել հայ ընտանիք մը:

Այս առթիւ, վերապահութեամբ ներկայացնելէ ետք Հայկ. ժող. Շարժումի քաներին տուած թիւերը, յիշեցնենք որ մեր պաշտօնակից «Ազդակ» օրաթերթը անցեալ շաբաթ 1500 կը ներկայացնէր Սումկայիթի գոհերուն թիւը, վկայակոչելով իրեն «հասած տեղեկութիւնները», հետեւաբար, վերապահութեամբ պէտք է մօտենալ ինչպէս այս՝ այնպէս ալ վերի թիւերուն, գորս միջազգային թէ այլ որեւէ ազբիւրէ կարելի չեղաւ ցարդ ստուգել, մինչ պաշտօնական խզբիւրներ օրերէ ի վեր կը կրկնեն 32ը՝ իբրեւ Սումկայիթի դէպքերուն զոհ գոցած սպանեալներու թիւ: Այսուհանդերձ, ինչպէս անցեալ օր կը յայտարարէր խորհրդային պաշտօնական քաներ կենտրի կերասիմով, «մէկ կեանքի կորուստն ալ շատ է»: